— Խելացի բան տեսար, — նկատեց ինձ նաւաստին ժպտելով:

Ամէն րոպէ սպասում էին խորասոյզ լինելու: Երբ մօտեցանք մի կողմից կղզուն, միւս կողմից ծովափին, նաւաստին ասաց.

— Վտանգը պէտք է անցած համարել:

— Ընդհակառակը, հէնց այժմ է գլխաւոր տագնապը, — նկատեց նրան Ասլանը:

— Ինչո՞ւ:

— Այժմ քամին փչում է արեւմուտքից, եւ ալիքները մղում են դէպի արեւելք, այսինքն՝ դէպի մերձակայ ծովեզրը. շուտով մեզ կը հեռացնեն կղզուց եւ, նաւակը զարկելով ցամաքի ժայռերին, կը փշրեն:

— Ես պիտի թողնեմ, որ տանեն եւ փշրեն:

Նա առաջարկեց թողնել նաւակը եւ լողալով անցնել կղզին, որը աւելի մօտ էր, քան թէ ցամաքը:

— Ես նպատակ չունեմ թրջուած կատոի նման վանքը մտնել, — պատասխանեց Ասլանը:

— Ուրիշ հնար չկայ:

— Կայ:

— Նաւակը շուտով մեզ հետ կը փշրուի ժայռերի վրայ:

— Եթէ այդ ուղղութեամբ տանենք, չի փշրուի:

— Այնտեղ ուժգին յորձանք կայ:

— Հէնց այդ յորձանքը կազատէ մեզ:

— Դուք համոզո՞ւած էք:

— Ինչպէս երկու անգամ երկու...

— Տեսնենք...

Գիտութիւնը եւ փորձը վիճում էին միմեանց հետ: Ասլանը, նայելով ալիքների ուղղութեանը, քամու ընթացքին, այդ համոզմունքն էր կազմել: Իսկ նաւաստին, հիմնուելով իր փորձերի վրայ, բոլորովին հակառակ կարծիք էր յայտնում. նա դարձեալ առաջարկում էր թողնել նաւակը եւ լողալով ընկնել կղզին: Թէ՛ այսպէս, թէ՛ այնպէս, տագնապը մեծ էր:

Նաւաստին դադարեց վիճել, նա թէորիայի մարդ չէր: Յանկարծ այն տեսանք, որ նա, նաւակից կապած երկայն պարանի ծայրը ձեռքին բռնած, նետուեցաւ ջրի մէջ: Սկզբում բոլորովին խորասոյզ եղաւ նա, մի ծանր խարսխի նման, որը, դէպի յատակը գնալով, կանգնեցնում է մրրկածուփ նաւը: Ես